

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ
(XIX դարի վերջին քառորդ)

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

XIX դարի վերջին քառորդի ռուսական մամուլում հաճախակի կարելի է հանդիպել Հայկական հարցին նվիրված հրապարակումներ: Եվ քանի որ Բեռլինի վեհաժողովից հետո հարցն արդեն միջազգային հնչեղություն էր ստացել և առանձնապես վերաբերում էր եվրոպական տերություններին ու Ռուսաստանին, ուստի ռուսական մամուլը մի տեղ մանրամասն ու հանգամանորեն, մեկ այլ տեղ համառոտ և հպանցիկ անդրադարձ էր կատարում արևմտահայության հիմնահարցին:

Հենց սկզբից պետք է նշենք, որ ռուսական մամուլի հրապարակումներում տիրապետողը Հայկական բարենորոգումների թեման էր և նրա շուրջը ծավալված քննարկումները: Հարցի մասին բավականին իրատեսական արձագանքների կարելի է հանդիպել ռուսական կենտրոնական գրեթե բոլոր լրագրերում: Ռուսական մամուլում Հայկական հարցը իրատեսորեն ներկայացնող լրագրերից էր «Санкт-Петербургские ведомости» թերթը. «Անմխիթար է հայերի դրուժյունը Հայաստանում, որտեղից հեռագիր հեռագրի հետևից հայտնվում է, որ քրգերի կողմից կողոպուտներն ու բռնությունները այն աստիճանի են հասել, որ ժողովրդի համբերության բաժակը լցվել է: Այդպիսի մի հեռագիր, որը Վանից է, — գրում էր լրագիրը, — կարճ, սակայն ազդու կերպով հաղորդում է. թուրքերը հայերին կողոպտում և սպանում են: Սարսափը պատել է ամենքին: Մի՞թե Հայ լինելը հանցանք է... Բեռլինի վեհաժողովից հետո երկու տարվա ընթացքում Հայ ժողովրդի վիճակի բարելավման համար ոչինչ ձեռնարկված չէ, իսկ քրգերի սկսած կողոպուտներն ու բռնությունները թուրքական կառավարության անգործության հետևանքն են»¹: Լրագրի 1897թ. «Ակն ընդ ական» վերնագրով առաջնորդողը ամբողջությամբ նվիրված էր ռուսական մամուլում բազմիցս չարչրկված «Հայ հեղափոխականների» հարցին: Թերթի մեկնաբանությունն այդ առթիվ հիրավի ուշագրավ է. «...այսպես կոչված «Հայ հեղափոխականները» ոչ թե կոսմոպոլիտ -անարխիստներ են, կարգի ու օրինապահության և քաղաքակրթության թշնամիներ, ինչպես կամենում են հավաստիացնել թուրքական կառավարությունը և եվրոպական թուրքասեր մամուլը, այլ մարդիկ, որոնք դաժան վարչակարգի պատճառով հասել են հուսահատության աստիճանի՝ զրկված են իրենց ծնողներից, կանանցից ու քույրերից: Նրանք միաժամանակ այրված են, անգլխաբար կոտորված իրենց ծնողների վրեժի ծարավով: Դուք ամեն տեղ կարող եք ունկնդիր լինել Հայ գյուղացու արդարացի ձայնին.» Տունս քանդված

1 «Санкт-Петербургские ведомости», 1880, N 95.

է, հարադատներս ու մտերիմները սպանված են... ինչի՞ համար եմ ես ապրում և հանուն ինչի ապրեմ: Ես պետք է մեռնեմ, սակայն պարտավոր եմ պատժել մարդասպաններին և վրեժխնդիր լինել նրանց համար. այս մարդկանց մեջ խոսում է ոչ թե «հեղափոխական» զգացումը, այլ սարսափելի հուսահատությունը»: Իրատեսական է հնչում նաև առաջնորդողի եզրափակիչ միտքը. «Թուրքերի գազանային հակումները շարունակում են սանձարձակ գործել. Փոքր Ասիայում 300 հազար հայերի թափված արյունն իրենց հայրենակիցների մեջ ներշնչել է հուսահատություն, քարացրել նրանց զգացմունքներն ու միտքը, և ներկայումս նրանք ծարավի են վրեժխնդրություն: Եվ այդ ամենը կատարվեց այն պատճառով, որ Եվրոպան թույլ տվեց Սուլթանին XX դարի շեմին ոչնչացնել մի ամբողջ խաղաղ ազդ միմիայն այն ընդհանր համար, որ այդ ազգը ձգտում էր ձեռք բերել մարդկային տարրական իրավունքներ...»³: Նույնարոպանդակ մի հաղորդագրություն էլ գետեղված է «ГОЛОС»-ում. «...Բ. Դուռը ոչ միայն չի իրադրոծում հայերին խոստացած բարենորոգումները, այլև ձգտում է սաստկացնել Փոքր Ասիայի քրիստոնյաների տառապանքները: Ամեն օր Հայաստանից սարսափելի լուրեր են ստացվում այն բռնությունների մասին, որոնք կատարվում են Հայ բնակչության նկատմամբ»⁴: Հողավածում իրավացի գիտողություն կա նաև Ռուսաստանի հասցեին. «Այսպես թե այնպես, — շարունակում է այնուհետև լրագիրը, — Ռուսաստանի պատիվն ու արժանապատվությունը պահանջում են, որ իր լավագույն զավակների արյունով ձեռք բերված դաշնագրի պայմանները խստություններ և հետևողականորեն իրագործվեն: Նույնն են պահանջում նաև Ռուսաստանի շահերը Արևելքում: Փոքր Ասիայի քրիստոնյա տարրը և մանավանդ հայերն այդ երկրների մեջ մեր միակ ու նվիրված դաշնակիցներն են և նրանց իրավացի պահանջները ներկա դարի երեք պատերազմներից հետո, այս էլ երրորդ անգամ խաբված են և չիրագործված: Մեր շահերն ուղղակի պահանջում են ապահովել հայերի վիճակը և վերջ դնել այս գրությունը ասիական մեր սահմանի մոտ»⁵: Այս հաղորդագրություններն էլ գետեղված են «Русский курьер» լրագրում. «Մենք արգեն հաղորդել ենք թուրքահայաստանի անմխիթար դրություն մասին: Հայերին խոստացված բարենորոգումները, որոնց կատարելու պարտավորությունը օսմանյան կառավարությունը հանձն էր առել Բեռլինի գաշնագրի համաձայն, մինչև այժմ իրագործված չեն և հույս էլ չկա որ կիրագործվեն: Հայ ազգաբնակչության կյանքն ապահովված չէ: Մեր վերջին պատերազմի հետևանքները հայերի հույսերը լրիվ կտրեցին. նրանք սպասում էին, թե վերջապես մահմեդական լծից կազատվեն... Թուրքերի գեմ ապստամբելու միտքը օր օրի ավելի է տարածվում հայերի մեջ: Վեց հայ քահանաներ կալանավորված են և գտնվում են Դիարբեքի թանտում: Նրանք մեղադրվում են այն բանի համար, որ հայկական գյուղերով շրջելով, ազգաբնակչությանը քարոզել են ապստամբելու թուրքերի գեմ... Բանտարկված շատ հայեր ուրախութ-

2 Նույն տեղում, 1897, N 234:

3 Նույն տեղում:

4 «ГОЛОС», 1880, N 172.

5 Նույն տեղում:

յամբ հայտնում են, որ պատրաստ են մեռնելու՝ միայն թե իրենց հայրենիքն ազատվի թուրքական լծից: Նրանք նմանապես հայտնում են, որ իրենց քաղաքական համախոհների թիվը շատ մեծ է և թուրքերին նրանք հանգիստ չեն թողնելու»⁶:

Հայկական հարցի մասին բավականին իրատեսական խորհրդածություններ է կատարել նաև «Новое время» լրագիրը, թեպետ հետագայում զգալի թվով հակահայկական հոդվածներ տպագրեց. «Թուրքական բռնությունների, կամայականությունների ու ճնշումների գոհերը գենք են վերցնում, որպեսզի իրենց ուժերով վրեժխնդիր լինեն այն դաժանությունների համար, որոնց ենթարկվում են հայերը: Նրանք այլևս չեն հավատում եվրոպական դիվանագիտության խոստումներին ու նրանց պաշտպանությունը: Գործն իհարկե միայն վրեժխնդրությամբ չի վերջանա: Հայ ապստամբների խմբերը գնալով օրեցօր ստվարանում են, նրանց են միանում նաև լեռնականները և ապստամբությունը կարող է տարածվել ողջ ասիական Թուրքիայի մեջ»: Այս հանդամանքը, — եզրակացնում է այնուհետև լրագիրը, — բազմաթիվ ապացույցներից մեկն է, որ անհնար է խաղաղ ճանապարհով վերջ դնել ասիական բռնությանը»⁷: Լրագիրն այնուհետև հարց է տալիս. «Եվ իրոք, որտե՞ղ միջոցներ փնտրել թուրքահպատակ հայերի վիճակը բարելավելու համար... Ժամանակն է հույսը կտրել Բ. Դուան բարի դիտավորություններից: Ամբողջ եվրոպան վաղուց արդեն խոստովանել է, որ թուրքական սարսափելի վարչակարգն այլևս անկարելի է տանել»⁸: Որքանով նկատում ենք, «Новое время»-ն հարցր բավականին սուր է դնում և սթափություն կոչ է անում «մեծ տերություններին». «Եթե եվրոպան իսկապես ցանկանում է թեթևացնել թուրքահպատակ քրիստոնյաների դրությունը, ապա պետք է հասկանա այն ճշմարտությունը, որ Արևելքի մեջ զինվորական աստվածապաշտությունը չի հանդուրժելու հայերի ինքնավարությունը՝ ո՛չ կրոնական և ո՛չ էլ տնտեսական գործունեության մեջ... Թուրքական կառավարությունը վաղուց արդեն համոզվել է, որ անգլիական դիվանագետների «քայլերը» վճռական ու հաստատ չեն»⁹:

Խնդրի առնչությամբ բանիմաց ու ճշմարտացի մեկնաբանությունների կարելի է հանդիպել նաև ռուսական ամսագրերում: Այսպես, «Вестник Европы» ամսագրի «Ընդհանուր իրավիճակը Արևելքում» տեսությունում իրավացի մի հաստատում կա. «Բայց, ինչպես և սպասվում էր, հունական և հայկական հարցերը Կ. Պոլսի կողմից կրկին մի կողմ դրվեցին»¹⁰: Ընդհանուր առմամբ, այս ամսագիրը արևմտահայության հիմնախնդիրը պարբերաբար լուսաբանող և, որ ամենակարևորն է, հարցի բուն էությունն ըմբռնող ռուսական հանդեսներից է: Ռուսական շատ ամսագրեր անդրադարձան Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանությունների կողմից սանձաղերձած հայկական կոտորածներին, սակայն

6 «Русский курьер», 1883, N 62,63.

7 «Новое время», 1880, N 113.

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում:

10 «Вестник Европы», 1881, N 1, с. 425.

«Вестник Европы»-ին այդ հարցում ցուցաբերեց հայ ժողովրդի ցավն ու տառապանքն ըմբռնելու բացառիկ կարողություն: Այդ են հաստատում ամսագրում տպագրված հոդվածները: Այսպես, 1895թ. «Ռեֆորմները թուրքահայաստանում» հոդվածում ամսագիրը իրավացիորեն նկատում էր. «Թուրքիայում կատարվեց կառավարության փոփոխություն, թեպետ այն ընտրությունների և քվեարկության արդյունք չի կարելի համարել. Մեծ վեզիր Ջեփադ փաշան պաշտոնանկ արվեց և նրա տեղը նշանակվեց Սայիդ փաշան: Եվ քանի որ սուլթանը չի բացատրում իր որոշումների շարժառիթները, ապա այս փոփոխության իրական շարժառիթը քչերին է հայտնի: Սակայն կարելի է կռահել, որ այն ուղղակիորեն կապված է հայկական բարենորոգումների խնդրի հետ: Բ. Դուռը հրաժարվել է այն հուշագրից, որը մայիսի 11-ին ներկայացրել էին Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները: Միևնույն ժամանակ, Թուրքիան առերես չի ցանկանում հրաժարվել քրիստոնյա ընկալությունը հնարավոր դիվաններ կատարելու բանակցություններից: Դիվանագիտական շրջանակներում հարցը հենց սկզբից ներկայացվեց այնպես, որ լուրջ հաջողությունների մասին խոսք անգամ լինել չի կարող: Թուրքական կառավարությունը, որի իրական գեմքը հայտնի է ողջ աշխարհին, առաջարկում է արմատապես փոխել հայկական նահանգների կառավարման համակարգը: Բ. Դուռը փորձում է խոստանալ քրիստոնյաների դրուծության էական բարելավում պայմանով, որ եվրոպական տերությունները հրաժարվեն այդ հարցում ուղղակի միջամտությունից և ամեն ինչ թողնեն «մեծահոգի սուլթանի հայեցողությունը»¹¹: Ամսագիրն այնուհետև եզրակացնում է. «Չպետք է մոռանալ, որ կայսրության ներքին գործերին չխառնվելու և նրա իրավունքն ու հեղինակությունը հարգելու պատրվակի տակ թուրքական դիվանագիտությունը շատ անդամ է հազմանակ տարել օտարերկրյա կաբինետների ներկայացրած պահանջների հանգեպ: Կարելի է միայն կռահել, որ հարցն այժմ էլ անարդյունք ավարտ կունենա և թուրքահայերի ճակատագիրը ոչնչով չի փոխվի, քանի գեռ նրանք մնում են թուրքական տիրապետության տակ»¹²: Հիրավի, ռուսական ամսագրի տված գնահատականը ճշմարիտ է :

Հայկական հարցին նվիրված այսպիսի մեկնաբանությունների ամսագրում էլի կարելի է հանդիպել. «Թուրքական իշխանությունները ձգտում են մատների արանքով նայել գինվորականների սանձազերծած ոճրագործություններին, քանի որ «անհավատների» կոստորածը և թալանը ոչնչով չի հակասում «թուրք հայրենասերների» դադարարներին և «ավանդույթներին»: Թուրքերը, – համարձակորեն գրում է ամսագիրը, – հանգիստ կլինեն միայն այն ժամանակ, երբ կայսրության բոլոր «անհուսալի տարրերը» իսպառ կբնաջնջվեն...»¹³: Ռուսական մյուս ամսագրերի նման «Вестник Европы» հանդեսը ևս հավատում էր, թե այդ ամենին «խանգարում են» եվրոպական տերությունների «անդրդվելի ներկայացուցիչները...»¹⁴: Շարունակելով հարցի քննարկումը, ամսագիրը մերկացնում է

11 Նույն տեղում, 1895, N 7, էջ 372- 373:

12 Նույն տեղում, 1896, N1, էջ 465:

13 Նույն տեղում, N7, էջ 424:

14 Նույն տեղում:

Թուրքական իշխանությունների դիրքորոշումը. «Թուրքական իշխանությունները գիտակցված դիմում են ամենատարբեր խոստումների ու սուտ բացատրությունների, որպեսզի ժամանակ չհասնի և հնարավորություն տան բանակին գոնե որոշ չափով կատարելու իր արյունոտ գործը: Այդպես եղավ Հայաստանում»¹⁵: Տեսութայան ուշադրավ կողմերից մեկն էլ այն է, որ այստեղ բավականին իրատեսորեն են ներկայացված Հայկական հարցի հետագայի մասին խորհրդածությունները. «Հնարավոր է, արդյոք, — գրում է ամսագիրը, — որևէ բանի հասնել այս դժբախտ Հպատակների համար «բարեկամական համոզումների և խորհուրդների օգնությամբ»: Դիվանագետները պարզորեն տեսնում և գգում են, որ դա անհնարին է (ընդհուպ — չ.չ.) և չնայած դրան, նրանք ստիպված են հարյուրերորդ անգամ կրկնել իրենց երաշխավորությունները, հիշեցումներն ու պահանջները, չունենալով հաջողության հասնելու ամենափոքր շանս անգամ»¹⁶:

Թուրքական իշխանություններին խստորեն դատապարտեց նաև «РУССКАЯ МЫСЛЬ» հանդեսը: 1895թ. նոյեմբերին «Թուրքական վայրագությունները Հայաստանում» վերնագրով հոդվածում ամսագիրը ղրսևուրեց իր որոշակի վերաբերմունքը հարցի նկատմամբ: «Սասունի անմարդկային կոտորածը, — գրում է «РУССКАЯ МЫСЛЬ»-ը, — եվրոպայի ուշագրությունը կրկին սևեռեց Թուրքիայում հայերի ողբերգական դրությունը: Անգլո-ամերիկյան մամուլում Հայտնվեցին բազմաթիվ հրապարակումներ, որոնք միահամուռ վկայում են, որ ոչ միայն բուն կոտորածների տարիներին, այլև դրանից շատ առաջ էլ հայերի դրությունը Թուրքիայում անտանելի է եղել. նրանք մշտապես ենթարկվել են քրդերի, համիրիեզների և Թուրք պաշտոնյաների կողմից կատարվող անսանձ թալանին ու բռնություններին»¹⁷: Բավականին ուշադրավ հոդված է գետեղված ամսագրի 1896թ. վերջին երկու համարներում՝ «Եվրոպան և Թուրքիան Հայկական հարցում» վերնագրով: Հրապարակման սկզբում տրված է ռուս-թուրքական վերջին պատերազմի գնահատականը. «...պատերազմն իր պատմական նշանակությամբ և վերջնական արդյունքով երբեք չհամապատասխանեց մեր սպասումներին ու ակնկալիքներին: Թվում էր, թե հզոր Ռուսաստանի մենամարտը «հիվանդ մարդու» հետ անվերադարձ կվճռեր և կավարտեր արդեն քանի դար եվրոպային և Ասիային սպառնացող Դամոկլյան սուրը՝ արևելյան հարցը: Թվում էր...»¹⁸: Քննելով Բեռլինի վեհաժողովի արդյունքները, հոդվածագիրը, որը չի ներկայացել (ստորագրել է Ա.) դրանում իհարկե, առաջին հերթին տեսնում է եվրոպական տերությունների մեղքը. «Թուրքիայում քրիստոնյա բնակչության վիճակի արմատական փոփոխության համար Ռուսաստանի վճռական քայլերի կողքին, ակնհայտ էր, սակայն, արևմտաեվրոպական քաղաքագետների դաժանությունն ու երկերեսանիությունը, որոնք անհաղթահարելի խոչընդոտ դարձան այդ նպատակների իրականացման համար, Ռուսաստանի ձեռքից խլելով մարդասիրական ձգտումների և հսկայական կորուստների պտուղները»:

15 Նույն տեղում, 1896, N1, էջ 465:

16 Նույն տեղում:

17 "Русская мысль", 1895, N 11, с.109.

18 Նույն տեղում, էջ 108:

րը»¹⁹: Հողվածի հեղինակը ճիշտ է նկատում նաև, որ «հաշտվելով եվրոպական ցամաքում իր տարածքների կորստյան հետ, թուրքերն ամուրկառչեցին իրենց ասիական տիրույթներից և եթե եվրոպական մասում նրանց ոտքի տակի հողը դնաց, ապա ասիական մասում նրանք որոշել էին ցուցադրել իրենց վայրենի ողջ հզորությունը»²⁰: Իսկ Եվրոպա²¹, հարցնում է հողվածագիրը. «Թուրքիան նույնիսկ այս վիճակով հարկավոր է եվրոպային: Դժվար է նկատել, որ ինքը՝ եվրոպան, միջոցներ չի խնայում հենասյուներ դնելու Օսմանյան կայսրության խարխուլ հիմքերը ամրացնելու համար...»²²: Ինչպես նկատում ենք, հեղինակի մտքերը բավականին իրատես են և ճշմարտացի: Ասվածից որևէ բառ անդամ չես հանի: Նա, սակայն, միաժամանակ «չի թաքցնում», որ «համաեվրոպական քաղաքականության տեսանկյունից և դարի հրատապ հարցերի կողքին, Հայկական հարցն այնքան փոքր է երևում, որ իմաստուն դիվանագետը առանց ժպտի չի կարող խոսել նրա մասին»²³: Ի տարբերություն ռուսական մամուլի շատ հրապարակումների, որոնք Հայկական հարցի լուծումը տեսնում էին եվրոպական տերությունների միասնական ջանքերի գործադրման մեջ՝ հանուն բարեփոխումների: Հեղինակն այստեղ հարցը դնում է կտրուկ և արմատական ձևով. «Հնարավորություն պետք է ստեղծել հայկական վեց նահանգներից կազմելու ինքնավար մարզ, հստակ որոշել հայկական տարածքների սահմանները, թուլյատրել նրանցում հայկական տարրի անարգել թափանցումը, միջոցներ ձեռնարկել քրդական և թուրքական սանձարձակություններից պաշտպանելու համար»²⁴: Հրապարակման մեջ Հայերին վերաբերող մի «հետաքրքիր» դրսևորում կա. «Ռուսաստանի հայերը մասնակիորեն մեղավոր են նրանում, որ իրենց համար գործունեության ոլորտ են ընտրել գերազանցապես առևտուրը և ժամանակի ընթացքում դարձել են դրամական հարաբերությունների գերին: Ռուս ժողովրդի պատկերացման մեջ ողջ հայ ժողովուրդը ներկայանում է որպես առևտրական, զուրկ հոգևոր պահանջմունքներից»²⁵: Դժբախտաբար, դարի վերջին Ռուսաստանում նման պատկերացում եղել է: Եվ հրապարակման նպատակ էլ հենց այն է, որ հեղինակը դրում և ապացուցում է հակառակը. «Հայ ժողովրդին բացառապես կամ գերազանցապես առևտրական ժողովուրդ ներկայացնելը պատմական թյուրիմացություն է, մակերեսային պատկերացումների ու հարցը խորապես չդիտելու և չուսումնասիրելու արդյունք: Առևտուրը երբեք չի եղել հայերի ազգային պատկանելիությունը... Նա գերազանցապես հողագործ է ու գյուղատնտեսական մշակության սիրահար, ջերմեռանդ աշխատասեր է, հրաշալի արհեստավոր ու այգեգործ: Ավելի բարձր աստիճաններում՝ նա հմուտ ծառայող է, խելացի կազմակերպիչ և անխոնջ գործարար»²⁶: Եվ որպես ասվածի ապացույց, հիշատակվում են հայագրի նշանավոր բազում գործիչներ, «որոնք հպարտությամբ են կրել

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում, էջ 109:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, էջ 110:

23 Նույն տեղում, էջ 114-115:

24 Նույն տեղում, էջ 111:

25 Նույն տեղում:

Հայագրի լինելու պատիվը»²⁶: Մեղսակցության բաժին հանելով իր Հայրենակիցներին, հոգավածագիրն այնուհետև գրում է. «Մենք չենք ցանկացել լսել իսկական Հային, չենք խորացել նրա սովորությունների ու պատմության մանրամասների մեջ, չենք ցանկացել իմանալ ճշմարտությունը այս հնագույն ժողովրդի մասին: Իսկ կովկասցի մեր հերոսներին՝ Մադաթով, Արղության-Երկայնաբազուկ, Բեհբուլով և ուրիշներ, ընդունել ենք որպես բացառություններ... Նույնիսկ կովկասյան պատերազմներին Հայերի ակտիվ մասնակցությունն ի գորու չեղավ փոխելու զինվորական մեր շրջանների պատկերացումները, որը չափազանց անբարենպաստ է Հայերի Համար»²⁷:

Ուշագրավ է նաև «РУССКАЯ МЫСЛЬ» ամսագրի 1897թ. անդրանիկ Համարի խմբագրականը, որը վերնագրված էր «1896 թվականը քաղաքական առումով»: Այն սկսվում է հետևյալ մեղադրանքով. «Ծանր ժառանգություն թողեց Եվրոպան անցյալ տարում: Թուրքական վայրագությունները քրիստոնյա բնակչության և հատկապես Հայերի նկատմամբ խորապես հուզեցին ու վրդովեցրին քաղաքակիրթ աշխարհին»²⁸: Հանդեսը, չթաքցնելով այդ ամենի իրական պատճառը, իրավացիորեն նշում է. «Նորից երևաց եվրոպական դիվանագիտության Հին մեղսակցությունը: Մեծ տերությունների միջև նախանձախնդրությունն ու կասկածամիտ մրցակցությունը կրկին Հայկական Հարցին զրկեց իրական արդյունքներից: Վախենալով բարգուծություններից, թե իբր այն կարող է զինված միջամտություն առաջ բերել, մեծ տերությունները որոշեցին գործել դիվանագիտական ճանապարհով: Եվ թեպետ ինչ-որ բան արդեն հաջողվել է և բացահայտ կոտորածներն ու ակնհայտ թալանը կանգնեցվել ... սակայն չարիքի Հիմնական պատճառը մնացել է նույնը և ոչ մի վստահություն չկա նրանում, որ սուլթանը և նրա կառավարությունը նորից չի բարձրացնի թուրքերին, քրդերին և կիսավայրենիներին (ընդգծումը — Ղ.Ղ.) քրիստոնյա բնակչության դեմ: Լորդ Սոլսբերին հրապարակավ Հայտարարեց, որ Համոզել սուլթանին այն բանում, թե հարկավոր է ազնիվ ու արդարացի վերաբերմունք, ամենափոքր Համոզմունքն անգամ չունենք, իսկ հենվել թուրքական կառավարության խոստումների վրա, աններելի միամտություն կլինի»²⁹:

Ամսագրի նախորդ Համարում գետեղված էր նաև Ա. Սազոնովի «Որոշ թվեր Կովկասի Հայերի մասին» հոդվածը: Հեղինակին մտահոգել էր Կովկասում տիրող այն անարդար մտայնությունը, թե իբր Հայերը տիրապետող են դարձել Կովկասի տնտեսական ու քաղաքական ոլորտներում: Ա. Սազոնովը թվական ստույգ ավալների Հիման վրա ապացուցում է, որ Հայերը նույնքան մասնակցություն ունեն այդ ոլորտներում, որքան մյուս ժողովուրդները: Իսկ առավել ուշագրավը հրապարակման ավարտն է. «Եթե որևէ մեկը, — ավարտում է իր հրապարակումը Սազոնովը, — հարցնի ինձ, թե որն է ուսական հասարակության և գրականության մեջ Հայերի մասին ձևավորված նման պատկերացումների պատճառը, որը լիովին հա-

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում, էջ 115:

²⁸ Նույն տեղում, 1897, N 1, էջ 151:

²⁹ Նույն տեղում:

կառակ է այստեղ նկարագրվածին, ապա ես թույլ կտամ ինձ ասելու, որ ճիշտ նույն կերպ էլ ռուսները ներկայացված են Ֆրանսիացի մեր բարեկամների մոտ և մինչև օրս այն փոփոխություն չի ենթարկվել...»³⁰: Համեմատությունն, իրոք, տեղին էր... Հրապարակումը լայն արձագանք գտավ Կովկասում. «Новое обозрение» թերթը հոգվածի առթիվ ընտրել էր «Ճշմարտություն Հայերի մասին» վերնագիրը: «Պետք է նկատել, — գրում էր թերթը, — որ գոնե այս անգամ լավեց մայրաքաղաքի մտավորականության իրատեսական ձայնը: Հուսանք, որ Սաղոնովի հոգվածն անուշադրություն չի արժանանա...»³¹:

«Новое обозрение»-ն, որը լույս էր տեսնում Թիֆլիսում (խմբագիրներ Գ.Մ և Կ.Մ Թումանովներ), բավականին ուշագրավ հրապարակումներ տպագրեց 1894-1896թթ. Հայկական կոտորածների մասին: Թերթի գրեթե յուրաքանչյուր համարում կարելի է հանգիպել ռուսական մամուլից արտատպված հրապարակումների, որոնք զետեղված են «Մամուլի տեսություն» ընդանուր խորագիրը կրող բաժնում: Դրանցից մեկում, օրինակ, կարգում ենք. «Санкт-Петербургские ведомости» թերթը զետեղել է էջմիածնից ստացված մի հազորագրություն, ուր ներկայացված է Թուրքիայից գաղթած Հայերի սարսափելի վիճակը: «Այս օրերին մեզ մոտ գաղթականության հարցը չափազանց լուրջ է, — ասվում էր հաղորդման մեջ: — Այդ գոթախոտ մարդիկ մազապուրծ են եղել Թուրքիայից՝ մոլեռանդ քրդերի ու թուրքերի վայրագություններից: Նրանց այստեղ փնտրում են օգնություն և տանիք... Քրիստոնեական մեր հզոր տերությունը հայերը գեռ հնուց նայել են որպես անկեղծ բարեկամների: Դրա վառ ասպցուլյցն են ռուս-թուրքական պատերազմների ժամանակ մեր բանակի հանգեպցուցաբերած նրանց ամեն տեսակ օգնությունը: Հիրավի, նրանց դրուժյունն անելանելի է... Վերջին օրերին գաղթականների նոր խումբ է եկել Վանից, որոնց մեծ մասը կանայք ու երեխաներ են: Այս հյուժված ու սովահար մարդկանց հնարավոր չէ նայել առանց կարեկցանքի: Բանակապետության ոչ մի չափանիշի մեջ չեն տեղավորվում փրկվածների կողմից պատմվող այն դաժանությունները, որոնք տեղի են ունենում այժմ Թուրքիայում...»³²: Այս երկտողն էլ ծանուցում էր Վանի ռուսական հյուպատոսի էջմիածին ժամանելու մասին. «Երկու օր առաջ էջմիածնով Ռուսաստան մեկնեց Վանի փոխ-հյուպատոս Մաևսկին, որի հետ է եղել նաև 500 հայերից բաղկացած գաղթականների մի խումբ»³³: Այս փոքրիկ և նույնիսկ աննշան այցելությունը տեղ տալու մղումը չէր, որ ցանկացել ենք ընդգծել: Բանն այն է, որ այսքանից հետո ուղղակի զարմանալի էր, թե ինչպես էր Մաևսկու, ինչպես ասում են «լեզուն պտտել» իր աշխատությունում, որը հրապարակ եկավ տարիներ անց, հայերին բնութագրել որպես թե անհնազանդ և «հեղափոխական ցնորքներով տարված» ժողովուրդ³⁴:

30 Նույն տեղում. 1896, N 10, էջ 173.

31 «Новое обозрение», 1896, N 4406.

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում:

34 Sб'у В. Т. Маевски й. Ванский вилайет, военно-статистическое описание. Тифлис, 1901.

Թերթի մյուս ակնհայտ առավելությունն այն էր, որ նրանում Հայկական կոտորածների և Հայկական Հարցի մասին քաղվածքներ էին բերվում արտերկրի մամուլից, ընդ որում, մեծ մասամբ տրված են ճշմարիտ մեկնաբանումներ: Ստորև տրվող հաղորդագրությունը «НОВОЕ ОБОЗРЕНИЕ»-ին, օրինակ, մեջբերել էր «Райх» սյարբերականից. «Դրուլությունը Կ.Պոլսում ծանր է: Հայ բնակչության տառապալի արտագաղթը տխուր տպավորություն է թողնում: Բազմաթիվ Հայ ընտանիքներ կանանց և երեխաների հետ, ամեն ինչ թողնելով հեռանում են՝ չիմանալով, թե ինչ է սպասվում իրենց հետադայում... Թուրքական կառավարությունն արեց այն, ինչին ընդունակ էր՝ Հայերի համար ստեղծելով անտանելի պայմաններ: Եվ դա նրան հաջողվեց: Այս ամենից հետո ծիծաղելի էին հնչում թուրքական թերթերի հավաստումները, որոնք ամբողջությամբ լցված են ստահող հաղորդագրություններով, թե իբր թուրքիայում լիովին հանգստություն է տիրում»³⁵:

Հարկ է նշել, որ ռուսական մամուլում ամենից հաճախ, սակայն, կարելի է հանդիպել Բեուլինի վեհաժողովի և մեծ տերությունների հետ առանձնակի հույսեր կապող հրապարակումների: Բնութագրական է, օրինակ, «Кавказский курьер» լրագրի այս մեկնաբանությունը. «Հայ անունը, որը մինչ օրս գործածվում էր իբրև պատմական տերմին, այժմ արդեն գարձել է գիտական հետազոտությունների, դիվանագիտական ու քաղաքական ոլորտների քննարկման առարկա: Հայ անունն այժմ ամենքին ծանոթ է և նրանց պատմությունը քաղաքացիության իրավունք է ստացել եվրոպական լուսավորության մեջ... Հայն ամեն տեղ կարող է հպարտ ու համարձակ բարձր պահել իր դյուխը և ասել՝ ես Հայ եմ: Ուստի չպետք է խղճալ Հայերին, որ նրանք եվրոպական կյանքի ու ժամանակակից պատմության մեջ պատվավոր տեղ զբաղեցնեն համար շատ զոհեր տվեցին... և եթե Հայոց ազդային դործի առաջադիմության համար նոր զոհեր պահանջվեն, Հայերն անկասկած իրենց չեն խնայի այդ առաջադիմությունը հաջողությամբ պսակելու համար: Եվրոպան արդեն ճիշտ ու հաստատուն համոզմունք ունի Հայ ազդի կոչման համար. գրեթե բոլոր տերությունները հավատացած են, որ ի վերջո Փոքր Ասիան կպատկանի այն պետությանը, որը մյուսներից ավելի կկարողանա գրավել Հայերի համակրանքը»³⁶:

Ռուսական մամուլում Հայկական Հարցին նվիրված մեկնաբանումների կարելի է հանդիպել նաև տարածաշրջանին կամ էլ առանձին Հարցերի վերաբերող հրապարակումներում: Այսպես օրինակ՝ «Исторический ВЕСТНИК» ամսագրի 1897թ. գեկտեմբերյան համարում ղետեղված է մի ռեպլիկ Աբդուլ Համիդի մասին, ուր հեղինակն իր գայրույթն է արտահայտում ամերիկյան «Centry Magazine» ամսագրում ղեսպանորդ Տերելլիի՝ Համիդի մասին արտահայտած կարծիքների առթիվ. «Սուլթանը երկինք է հանվում, կարծես թե առաջին քաղաքակիրթ տիրակալն է եվրոպայում, խոսքի և խղճի ազատության, նույնիսկ Հայերի հովանավորը... Ջավելտականն այստեղ այն է, որ թուրքական տիրակալի մասին բնութագրությունները ղեսպանորդը կատարել է Հայերին մատնանշելով և Հայկական Հար-

35 «Новое обозрение», 1896, N 1402.

36 «Кавказский курьер», 1881, N 22.

ցի տեսանկյունից: Իր զրույցը ամերիկացու հետ սուլթանը սկսել է այն համոզումով, որ հայերին հետապնդելու իր հասցեին արված բոլոր մեղադրանքներն անարդարացի են, թե իբր իրականում չկան հայկական կոտորածներ, այլ կան միայն հայերի կողմից հրահրված անկարգություններ, որոնք մեծահոգաբար են ընկալվում թուրքերի կողմից, թե իբր հարյուրամյակների ընթացքում հայերն օգտվել են թուրքերի հովանավորությունից և որ ընդհանրապես անիմաստ է մտածել մուսուլմանների կողմից հայկական կոտորածների վրաստի մասին: Եվ այդ ամենի փոխարեն, — շարունակել է «համոզել» սուլթանը, — հայերը պատասխանեցին սև երախտամոռությունը և դավադրություն սկսեցին օսմանյան պետության դեմ...»³⁷: Ներկայացնելով հողվածում տեղ գտած այլ մանրամասներ ևս, վերջում ամսագիրն այդ ամենի շուրջ արտահայտում է իր կարծիքը. «Զարմանալի է, եթե չասենք ավելին, որ ամերիկյան դեսպանորդն իր զրույցը սուլթանի հետ սկսել է ողջութան մաղթանքներով և այն ավարտել հայերին ուղղված անդորրության կոչով, իսկ իր հերոսին նեկայացրել է որպես պետականության մարմնավորող, մոլեռանդ առաջնորդին մոլեռանդ զինվորներ ունենալու կարևորության հավաստումով... Ամերիկյան դիվանագետը մի բանում ուղղակի զլացել է. մոռացել է ներկայացնել երկնքին վառողի ծխի միջով նայելու իր հերոսի «գերազանց ունակությունները» և երկրի երեսին դժոխք սարքելու նրա բացառիկ շնորհքը: Իրականում սուլթանը «համարձակի» և վախկոտի, սիրալիր զրուցակցի և լկտի թալանչու, ընտանիքի առատածեռն հոր և արյունռուչտ մի հրեշի, երազկոտի ու մոլի մարդասպանի մի ուրույն տիպար է՝ եվրոպացուն ընդօրինակելու և ամենուր սարսափ ու ավերածություն սփռելու մոլուցքով»³⁸:

Հայկական հարցի մասին անկողմնակալ, ճշմարտացի մեկնաբանություն է տալիս նաև «Отечественные записки» ամսագիրը: 1876թ. «Կովել, թե չկովել» խմբագրական հողվածում կարդում ենք. «Կոստանդնուպոլսի գրավումը եվրոպական տերությունների համար անիրականանալի երազանք է և կասկած էլ չունենք, թե որևէ տերություն տարված է այդպիսի երազանքով (ընդգծումը — Ղ.Ղ.), քանի որ Կոստանդնուպոլսի փոխարեն նրանց համար կա ավելի քան իրական շահախնդրություն թուրքիային պաշտպանելու համար: Այդ ակնկալիքներն ու շահախնդրությունն էլ հենց խանգարում են արևելյան հարցի լուծմանը: Չլինեին այդ խոչընդոտները, — եզրափակում է հանդեսը, — արևելյան հարցը վաղուց արդեն հեշտ ու արագորեն լուծված կլիներ»³⁹: Ասվածը բավականին ուղղամիտ և ճշմարտացի է:

Այս ամենով հանդերձ, ռուսական պարբերականների մի մասն էլ հարցի լուծումը տեսնում էր Ռուսաստանի վճռականության մեջ. այդպես էր մտածում, օրինակ, «Сын Отечества» լրագիրը. «Ապագայում թուրքահայերին թշվառ դրությունից դուրս բերելու միակ հույսը Ռուսաստանն է, որովհետև նրանց օգտին եվրոպացիների միջամտությունը անկեղծ չէ և հետապնդում է անձնապաշտական նպատակներ: Անգլիան, օրի-

37 «Исторический вестник», 1897, N 12, с. 1068.

38 Նույն տեղում, էջ 1068-1069:

39 «Отечественные записки», 1876, N 6, с. 365 — 366.

նակ, չնայած իրեն ներկայացնում է Հայերի բարեկամ ու սրտացավ, սակայն նրա միակ նպատակը առևտրական շուկայի ընդարձակումն է և իր քարոզիչների միջոցով Հայերի մեջ բողոքականություն տարածելը»⁴⁰:

Հայկական Հարցի մասին ռուսական մամուլի մոտեցումների ու նրանց ունեցած դիրքորոշումների ինդերում բավականին հստակ պատկերացում են տալիս նաև «Մշակ» օրաթերթում կատարված արտատպումները, որոնք գետեզված էին «Հայոց խնդրի մասին» ընդհանուր խորագիրը կրող բաժնում: Այս հաղորդագրությունն, օրինակ, թերթն առանձնացրել էր «Русские ведомости» լրագրից. «Դժվար է իհարկե կանխագուշակել Հայկական Հարցի հետագա զարգացումը. եթե մեծ տերությունների միջև եղած համաձայնությունը չխաթարվի թուրքական դիվանագիտության մի ճարպիկ խաղով, հարցը գուցե փոքր ի շատե լուծում ստանա և կարողանա գոհացնել մարդկության պահանջը, որի համար խիստ ցանկալի է խրոնիկական դարձած Հարցի վերջնական լուծումը»⁴¹: Այս գետեղումն էլ «Московские ведомости» լրագրից է. «Անդրիացիները մինչև այժմ ավելի ճարպիկ են Հայկական Հարցում, քան թուրքերը: Վերջերս սուլթանը Լոնդոն ուղարկեց Վուդ փաշային՝ անգլո-թուրքական այդ ծովակալին, որը հինգ շաբաթվա ընթացքում բաղձաթիվ հողավածներ գրեց Հայերի դեմ և երբ նրա գործունեությունը արդյունք չտվեց, Բ. Դուռը այս անգամ մտածեց բարեկամանալ ինձնեցի հետ, որը Սասունի դեպքերին ակնատես միակ եվրոպացին էր և հարկադրեց նրան Լոնդոն ժամանել՝ անգլիական հասարակայնությունը համոզելու, թե «Հայկական սարսափները» ոչ այլ ինչ են, քան Հայ հեղափոխական կոմիտեների հնարովի խարդավանքներ»⁴²: Թերթելով դարավերջի «Մշակը», պիտի ասել, որ ռուսական մամուլից արտատպված այդպիսի հաղորդագրությունները եզակի չէին թերթում. «Քրդերի կողոպտիչ հարձակումներից տանջված Հայերն այն աստիճան վախեցած են, գրում էր օրինակ «Правительственный вестник»-ը, որ չեն համարձակվում նրանց դեմ գանգատ ներկայացնել նահանգապետին: Միայն օրերս մի քանի Հայեր երկյուղ չկրելով քուրդ առաջնորդների սպառնալիքներից, դիմեցին նահանգապետին՝ չարադրոճներից պաշտպանվելու հույսով: Սակայն թուրք նահանգապետը բավարարվեց նրանով, որ երեք քրդի կալանավորեց և ապա ազատ արձակեց»⁴³: Ասսունի կոտորածները հավաստող այս հաղորդագրությունը թերթը արտատպել էր «Одесский листок» լրագրից. «Հայաստանում կատարված բարբարոսությունները քննելու համար եվրոպական հանձնախմբի հետ սուլթանը ուղարկեց նաև թուրքերից կաղմված մի խումբ: Երբ այդ հանձնախումբը հասավ Մուշ... տեղի իշխանավորների հետ ունեցած երկար բանավեճից ու ջանքերից հետո Հայերին հաջողվեց ներկայանալ հանձնաժողովին: Սակայն որքան մեծ եղավ նրանց զարմանքը, երբ հանձնաժողովի կազմում նրանք տեսան Ասսունի բարբարոսությունների դիտավոր «հերոսներից» մեկին: Խեղճ Հայերը չկարողացան զսպել իրենց զայրույթը և բարձր աղա-

40 "Сын Отечества", 1886, N 174.

41 «Մշակ», 1895, N13:

42 Նույն տեղում, N16:

43 Նույն տեղում, N 26:

ղակեցին՝ ահա մեր ճշողներին մեկը:— Այդ ես չեմ,— պատասխանեց շփոթված թուրքը, այդ քրդերն են...»⁴⁴:

Դատելով «Մշակում» գետեղված արտատպումներից, ռուսական մամուլը հատկապես բուռն է արձագանքել Հայկական հարցի մասին անգլիական լրագրերի անդրադարձերին: Այդ հրապարակումներում նկատելի կասկած և ընդգծված անվստահություն կա անգլիական դիվանագիտության ձեռնարկած քայլերի հանդեպ: «Անգլիային չի հաջողվի գործը գլուխ բերել,— գրում էր օրինակ «Новое время»-թերթը: — Հարցը Հայկական նահանգների գրավմանը չի հասնի: Ռուսաստանի ազդեցությունը թուրքիայի վրա այնքան զորեղ է, որ ռուսական դիվանագիտական քայլերը և կոտորածների վայրերում դիտորդներ ուղարկելը բավական կլինեն ստիպելու թուրքիային՝ իրագործելու Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը»⁴⁵: «Անգլիական կառավարությունն ամենից քիչը իրավունք ունի աղաղակել և կոտորածների առթիվ ազմուկ բարձրացնել,— դրում էր «Новости» լրագիրը,— որովհետև անցյալ պատերազմի ժամանակ, Անգլիան հանդես էր դալիս թուրքիայի անձեռնմխելիության պաշտպանի դերում: ...Բ. Դուռը, տեղեկանալով, որ հայերը դիմել են Վիկտորիա թագուհու ազդական դուքս Տեկին և իբր նա բարեհաճ կերպով է ընդունել հայերի խնդրագիրը, վճռել է ավելի խիստ կերպով հալածել հայերին թուրքական պետության սահմաններում»⁴⁶: «Սուլթանը բրիտանական դեսպանին հայտնել է,— գրում էր «Биржевые ведомости» լրագիրը,— թե թուրքական իշխանությունների գործողությունները գնահատելու նպատակով հրավիրվող եվրոպական հանձնաժողովը ստվեր կնետի օսմանյան գահի հեղինակությունը վրա և հայերի մեջ հուզումների տեղիք կտա: Սուլթանը խնդրել է հավատալ իր խոսքին, որ կկատարվի անկողմնակալ քննություն»⁴⁷: «Московские ведомости» թերթը, գետեղելով լոնդոնյան լրագրերի արձագանքները թուրքիայում կատարվող դեպքերի մասին, իր հերթին դրում էր. «Սուլթանը մեծ սխալ է գործել՝ շքանշան տալով Ջեքի փաշային, որը Սասուն արչավող գործերի հրամանատարն էր: Անկասկած մեծ սխալ է, երբ թուրքական կառավարությունը մի կողմից խոստումներ է տալիս, թե խիստ քննություն է լինելու և արյունարբու պաշտոնյաները կպատժվեն, մյուս կողմից շքանշան է տալիս Ջեքի փաշայի նման մարդուն, որի հրամանով հազարավոր հայեր մորթվեցին և սրի ճարակ դարձան Սասունի լեռներում»⁴⁸: Նկատենք, որ թեպետ ռուսական պարբերականները չէին սխալվում, սակայն, միաժամանակ, պիտի հասկանալի լինի այդ հարցում Ռուսաստանի հետամուտ շահախնդրությունը:

Ռուսական մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես արևելյան, այնպես էլ Հայկական հարցի մասին հոդվածները, որպես կանոն, հրապարակ էին գալիս կամ ռուս-թուրքական պատերազմի նախօրերին կամ էլ՝ բուն պատերազմի տարիներին: Ընդհանուր առմամբ, դրանք իրատեսական քննարկումներ էին և ներկայացվում էր հարցի ողջ լրջութ-

44 Նույն տեղում, N19:

45 Նույն տեղում, 1894, N 140:

46 Նույն տեղում, N 143, 144:

47 Նույն տեղում, N 138:

48 Նույն տեղում, N 139:

յունն ու ղժվարությունը: Այսպիսին է օրինակ, «Отечественные записки» ամսագրում գետեղված Լ. Լեբեդևի «Թուրքիա: Ակնարկ նրա պատմական զարգացման և ներկայիս դրության» ուշագրավ հոդվածը: Հեղինակը, վերլուծության ենթարկելով Թուրքիայի անցյալն ու ներկան, համարձակ ընդգծումներով բնութագրում է Օսմանյան կայսրության անցած ողջ արյունոտ ճանապարհը: Իր բնորոշումների մեջ Լ. Լեբեդևը գրեթե անսխալ է. «Թուրքերի անցած ողջ պատմական ուղին, — գրում է նա, — նրա ապշեցուցիչ հաջողություններն ու հետագա ճգնաժամերը և, վերջապես, կայսրության արագորեն անկումը բոլոր ժամանակներում անխզելիորեն կապված են մահմեդականության հանդեպ ունեցած հարաբերության հետ... Միևնույն ժամանակ, Թուրքական կայսրությունն ունի լիովին ձևավորված ռազմավարություն և նրա արհեստը միայն պատերազմն է... Իսլամի գլխավոր սկզբունքներից մեկը մուսուլմանի անհամատեղությունն է ենթակա ժողովրդի հետ, որը Թուրքերին ձուլում է որպես մեկ ամբողջականություն և դարձնում նրան մարտական: Իսլամը հանդիսացել և իրականում արգեն դարձել է նրանց ղեկավարող միակ ուժը՝ ինչպես կրոնական, այնպես էլ քաղաքական, քաղաքացիական ու ընտանեկան հարաբերություններում»⁴⁹: Կարծում ենք, «Отечественные записки» հանդեսի այս խորհրդածությունը ևս հեռու չէ հարցի իրական ներկայացումից. «Եվրոպական քաղաքականության մեջ գոյություն ունեն մի քանի հանգուցահարցեր, որոնց վիճակված է Դամոկլյան սրի դեր ստանձնելու եվրոպական հասարակության խաղաղ ու հանդարտ զարգացման խնդրում: Հանդիսանալով պատմական անհամաչափ հանգամանքների խմբավորման արդյունք, — գրում է հանդեսը, — այդ հարցերը երբեք իրենց վերջնական լուծումը չեն ստանա և կշարունակեն գոյատևել որպես անվերջանալի և անկանխատեսելի հանգուցյներ... Իսկ հարցն այդ համառորեն սլահանջում է իր լուծումը»⁵⁰: Հանդեսի կարծիքով արևելյան հարցի ձգձգումը կարող է հանդեցնել այնպիսի մի իրավիճակի, երբ «ողջ եվրոպան նորից կալեկոծվի, քաղաքական կրքերը կրկին կբորբոքվեն և հին թշնամությունն ու հույսերը կարթնանան նոր ուժով և նորից կսկսվի Սիզիֆյան աշխատանք անլուծելին լուծելու համար»⁵¹: Այս մեկնաբանությունն էլ գետեղված է «Русский вестник» ամսագրում. «Թուրքիայում թափվող քրիստոնյաների արյունը ի վիճակի չեղավ բուժելու այն մահացու վերքը, որն արգեն երկար ժամանակ սպառնում է մահմեդական կայսրությանը: Թուրքական կառավարությունը իրականում ոչնչով չարդարացրեց եվրոպացիների հույսերը և չբավարարեց քրիստոնյա հպատակների արդարացի պահանջները: Թուրքական իշխանությունների ցանկությունը իրականացավ. եվրոպական տերությունները այլևս չեն խառնվում իրենց ներքին գործերին: Իսկ գործը դրանից միայն տուժեց: Թուրքական սուլթանի այսպես կոչված «բարենորոգումների ծրագիրը» չի իրագործվում, իսկ բազմաթիվ հանձնաժողովները, որոնք ստեղծվում են Կ.Պոլսում եվրոպական ղեկավարներին

49 «Отечественные записки», 1876, N 11, с. 100, 103.

50 Նույն տեղում, 1864, т. 155, N 7-8, с. 449.

51 Նույն տեղում:

Հանգստացնելու համար, միայն հուսադրական միջոցներ են: Իսկ թուրքերն այդպիսի սին խոստումների վարպետ են...»⁵²:

Հայկական հարցի առնչությունը ռուսական մամուլում կարելի է հանդիպել նաև Ռուսաստանի արտաքին գերատեսչությանն ուղղված բննադատականներ: Ռուսական դիվանագիտության վեհերոտ քալի մասին է, օրինակ, «РУССКАЯ МЫСЛЬ»-ի հետևյալ հանդիմանությունը. «1878թ. մայիսի 18-ին Սոլսբերիի և կոմս Շուվալովի միջև կայացավ գաղտնի մի համաձայնություն, առանց որի կարող էր խափանվել նույնիսկ Բեռլինի համաժողովի հրավիրումը: Այդ համաձայնագրով Ռուսաստանն Ասիայում հրաժարվեց Բայազետից՝ ռազմավարական առումով մեզ համար այդքան թանկ ամրոցից, որի պատերի տակ այդքան ռուսական արյուն հոսեց և հայրենական պատմության հերոսական էջ դարձավ դնդապետ Շտոկվիչի պաշտպանությունը: Դրանով փաստորեն Ռուսաստանը նահանջեց Սան-Ստեֆանոյի հաշտությունից և կուլ դնաց իշխան Գորչակովի պատկերացումներով ստեղծված եվրոպացիների պատրանքալին համերգին... Իրականում եվրոպական զինված միջամտության բոլոր այդ ստահող սպառնալիքները, Բոսֆորի ափին ծվարած բոլոր այդ նավատորմները միայն օճառի պղպղակներ էին՝ հենց անդլիական նախարարների խոստովանությամբ: Սակայն այդ ամենն այնպիսի զորեղ ազդեցություն ունեցավ կոմս Պ. Շուվալովի վրա, որ նա հապշտապ ստորագրեց մայիսյան չարաբաստիկ այդ համաձայնագիրը»⁵³:

Ամփոփենք. Հայկական հարցն իր առանձին դրսևորումներով քննության առարկա է դարձել ռուսական մամուլի էջերում և որքանով նկատեցինք, մեծ մասամբ դրանք իրատեսական մեկնաբանումներ էին: Սակայն մեկ վերապահություն, այնուհանդերձ, հարկ է կատարել. եթե ռուս առանձին հեղինակներ բավական համարձակ էին իրենց մոտեցումների մեջ և տրված էր Հայկական հարցի ճշմարտացի դնահատականը, ապա նույնը չի կարելի ասել հարցի լուծման արմատական ուղիները ցույց տալու խնդրում: Ռուսական մամուլը առավելապես «ապավինել» է Բեռլինի վեհաժողովի հողվածների ոգուն, թեպետ իրենք էլ դիտակցում և ըմբռնում էին, որ դրանում ցանկությունն ավելի շատ է, քան իրատեսականը:

Եվ այնուհանդերձ, Հայկական հարցի այս մոտեցումները նույնիսկ ինչ-որ տեղ սփոփանք էին հայ ժողովրդին, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ ծանր ու եղեռնական ժամանակներում ռուսական առանձին թերթեր ու ամսագրեր, առանց խղճի խայթ զգալու, տպագրում էին այդ ամենի մեջ հայ ժողովրդին մեղադրող և նրա բարոյական կերպարը սևացնող հրապարակումներ: Ուստի, թյուր կյիներ կարծել, թե ռուսական բոլոր հանդեսներն են Հայկական հարցն այդպես իրատեսորեն ներկայացրել: Այդ հրապարակումների կողքին կային նաև այնպիսիները, որոնց բնութագրական էին հարցի միակողմանի մեկնաբանումն ու փաստերի խեղաթյուրումը, իսկ ստեղծված իրավիճակի մեղավորներին փնտրում էին հայերի մեջ: Եվ յավախն այն է, որ այդպիսիները ռուսական մամուլում եղակի չէին: Մյուսներն էլ, ինչպես ասում են, բերանները ջուր էին

52 «Русский вестник», 1878, т. 14, с. 37.

53 «Русская мысль», 1882, кн. 5, с. 117—118.

առել: Օրինակ, ինչով բացատրել, որ «Русское богатство» հանդեսը ողջ այդ ընթացքում անդամ թուուցիկ հրապարակումով հանդես չեկավ: Կամ ասենք «Русское обозрение» հանդեսը, ուր Հայկական հարցի մասին զետեղված են մեղմ է ասել՝ սխալ և թյուր մեկնաբանումներ: Սկզբում թվում է, թե հանդեսը միանշանակ հանդարտ կեցվածք է ընդունել: «Հայկական հարցը փակված է, – դրում է ամսադիրը, – խաղաղությունն արևելքում ապահովված է: Հեռադրատները հաղորդում են, որ սուլթանը տվել է իր համաձայնությունը բարենորոգումներ կատարելու այն ծավալով, ինչպիսին ներկայացվել է եվրոպական տերությունների կողմից և շատ շուտով կհայտնվի սուլթանի ֆիրմանն այդ մասին»⁵⁴: Սակայն պաղվում է, որ այս «նորությունը» չէ, որ ցանկացել է իր ընթերցողներին հայտնել հանդեսը. «Այդ ամենը եվրոպական տերությունների ջանքերի արդյունքն են, որը վերջ կդնի այդ անկարգություններին, եթե, իհարկե, այն նորից չհրահրվի հայ հեղափոխականների կողմից՝ անգլիացիների աջակցությամբ»⁵⁵: Որքանով նկատեցինք, հանդեսի «մտահոգության» իրական պատճառը հայոց խնդիրը չէ, այլ այն, որ «Անդլիան վաղուց արդեն ինչ ձգտում է գլխավորել այն միությունը, որը կազմվել է եվրոպական տերությունների կողմից՝ Հայկական հարցը լուծելու այն տեսքով, որպեսզի այն դադարի եվրոպական խաղաղության համար սպառնալիք լինելուց (ընդգծումը – Ղ.Ղ.)»⁵⁶: Ընդգծված բառերը կարելի է դեռ մեղմ որակել, քանի որ ամսագրի կարծիքով «այդ ամենի մեղավորը հայերն են, որոնք չցանկացան հանդիստ սպասել մեծ տերությունների միջամտության արդյունքներին (իրատեսությունն ինչպիսի դրսևորում – Ղ.Ղ.) և հույսը գրեցին այն Անգլիայի վրա, որը դեռ ոչ վաղ անցյալում ամեն հնարավորն արեց խանդարելու թուրքի քրիստոնյաների դրությունը բարելավելու համար ձեռնարկվող քայլերին»⁵⁷: Հետաքրքիր է նաև հանդեսի կարծիքը Ռուսաստանի դիրքորոշման վերաբերյալ. «Ռուսաստանի համար խնդիրը չի ամփոփվում միայն Հայ քրիստոնյաների վիճակի բարելավման խնդիրներով, այլ որքան կարելի է շուտ փակել այս դիպվածքը, որպեսզի ձեռքազատենք մեր ձեռքերը (ընդգծումը – Ղ.Ղ.) և նորից ստանանք դործությունների լիառատ ազատություն: Ռուսաստանի համար թուրքական հարցի (ասել կուզի Հայկական հարցի – Ղ.Ղ.) բարձրացումը ժամանակին չէր...»⁵⁸: Դա էլ ոչինչ. առավել «բնութագրական» մեկնաբանության ավարտն է. «Այժմ հայերի ճակատագիրը հանձնված է իրենց իսկ սեփական ձեռքը: Նրանք պետք է իրենց վարքագծով ապացուցեն, որ արժանի են եղել այն հողածություններին, որպիսիք եվրոպական տերությունները իրադործել են նրանց համար՝ թուրքերին հավասար իրավունքներ ձեռք բերելու խնդրում... հայերը պիտի հիշեն, որ ինքնավարության մասին ամեն տեսակ երազանքները, որոնք նրանց մեջ բորբոքում են անգլիացիները, պետք է մի կողմ դրվեն... Եվրոպան չի հանդուրժի, որ ինչ-որ հայերի պատճառով սպառնալիք դառնան եվրոպական խաղաղության համար

54 «Русское обозрение», 1895, N11, с. 497.

55 Նույն տեղում:

56 Նույն տեղում, էջ 498:

57 Նույն տեղում:

58 Նույն տեղում:

(ընդգծումը – Հ.Հ.)»⁵⁹: Ահա այդպես: Եվ զուր եղան մեր ջանքերը հանդեսում իրատեսական որևէ վերլուծական փնտրելու Հայկական հարցի մասին: Դրա փոխարեն, ամսագիրն ամեն անգամ իր հին երգն էր երգում. «Կրկին դիվանագիտական ասպարեղ է իջել Հայկական հարցը: Անգլիայում, օրինակ, նրանով զբաղված են փոքրից մինչև մեծ... օրերս ծերունի Գլադստոնն արտասանեց իր զգացմունքային ճառերից մեկը՝ Թուրքիային սպառնալով նույնիսկ խաչակրաց արշավանքով ... Սակայն հայերն այնքան էլ միայնակ ու անօգնական չեն և ոչ էլ այդքան անմեղ քաղաքական տարր, ինչպես ներկայացնում են: Հնարավոր է (ընդգծումը – Հ.Հ.), որ Թուրքական իշխանությունները և հարևան քրդերը նրանց ճնշում են: Սակայն բավականին լուրջ և իրատեսական հետաքննությունը ցույց է տալիս, որ պարոնայք հայերը վաղուց արդեն իրենց հայրենակիցների ուղեգր լցրել են «խոնավարարական» ամեն տեսակ գաղափարներով»⁶⁰: Այսքանից հետո չպիտի զարմանալ, որ հանդեսը հայ Ֆիդայիներին անվանել է տեռորիստական բանդա⁶¹: Եվ հենց այսօրինակ հրապարակումները նկատի ունենին ռուս հեղինակները, երբ իրենց հրապարակումներում մատնանշում էին ռուսական մամուլում հակահայկական առանձին դրսևորումների առկայությունը փաստը: «Русское обозрение» հանդեսը նրանց շարքում «առաջամարտիկի» գերում է: Որքան էլ տարօրինակ էր, 90-ականների վերջին իր էջերում հակահայկական հոդվածներ տպագրեց նաև «Новое время»-ն: Այնքան նկատելի էր նրա անհանդուրժողական դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ, որ նույնիսկ առաջացրեց ռուսական պարբերականների արդարացի գայրույթը: «Մշակում», օրինակ, մենք հանդիպեցինք «Мир. Отголоски» լրագրի արձագանքին. «Новое время»-ն - չի դադարում հալածել հայերին: Փորձելով ապացուցել, թե հայ ժողովուրդը վտանգ է ներկայացնում Ռուսաստանի անդորրությունը, առաջարկում է հայկական ազդեցության դեմն առնել...»⁶²: Հավաստի փաստարկներով առարկելով «Новое время»-ի պնդումներին, լրագիրն այնուհետև գրում է. «Այդ բոլորը կամ դալիս է տգիտությունից, կամ էլ իր մեջ խնդիրը միակողմանի լուսաբանելու դիտավորություն է պարունակում... Եվ ինչու՞ հայերին պետք է մեղադրել մի բանում, որում ոչ ոք չի մեղադրվում: Ինչու՞ հայերի հաջողությունները առևտրի մեջ այդքան պախարակելի են համարվում, իսկ առևտրական գործարքներում նրանց հետ մրցողների անհաջողությունը մի տեսակ անարդար համարվում: Նույնիսկ հայերի կոտորածների ժամանակ փորձեր եղան ապացուցելու, թե մահմեդականները հայերի կողմից համարյա թե նույն կոտորածին են ենթարկվել»⁶³: Պատասխանելով «Новое время»-ի գլխավոր մեղադրանքին, թե իբր այս ամենի պատճառը հայերի ազգային ձգտումներն են, թերթն ուղղակի գրում է. «Ինչու Ֆրանսիացին կարող է երազել էլզասը վերադարձնելու մասին, լե-

59 Նույն տեղում:

60 Նույն տեղում, էջ 464:

61 Նույն գարմանքը, սակայն, մենք չապրեցինք վանի ներկայիս թանգարանում, երբ ցուցափեղկերից մեկում հանդիպեցինք Թուրքական մի հրատարակության, որի վերնագիրը անգլերեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով ազգարարում էր «Ռուսների հավաստումները հայերի կողմից Թուրքերի ճնշումների մասին»:

62 «Մշակ», 1897, N 27:

63 Նույն տեղում:

Հացին՝ Լեհաստանը վերականգնելու, ճապոնացին՝ Չինաստանը նվաճելու, ավստրիացին՝ Սալոնիկյան ծովածոցի, անգլիացին՝ Համաշխարհային տիրապետության, իսկ մենք՝ Կ. Պոլսի, Հնդկաստանի և Հենց անգլիացու վրա իշխելու մասին, և միմիայն Հայերը չպետք է երազեն Հայկի Հազարամյա կործանված թագավորության մասին... Զավեշտական է հնչում «Новое время»-ի պնդումը. թե իբր ողջ Հայ ազգը կազմված է միայն անարժան անձերից, կարծես թե անարժան մարգիկ չկան մյուս ազգերի մեջ և որ նրանք նույնիսկ Հայերի համեմատ արժանավորություն ունեն։ Պետք է բոլորովին մոռանալ մոտ անցյալի պատմությունը և անտեսել ընթացիկ դեպքերը, երբ Հայերի միջից առաջ եկան նշանավոր զորապետերի, կառավարիչների, գիտնականների, արվեստագետների փառավոր անուններ, որպեսզի ապացուցվի, որ Հայերը Ռուսաստանին միայն չարիք չեն բերել։ Հայերի քաղաքական ծանրակշիռ ծառայությունները հաստատված են ներկա դարի ընթացքում հենց ռուսական կայսրերի կողմից։ Ալեքսանդր Առաջինի 1813թ. սեպտեմբերի 15-ի բարձրագույն հրովարտակում ասված է. «Հայերն աչքի են ընկել իրենց օրինակելի հաստատակամությունը և անձնազոհությունը, երբ թեթևամտությունը և անբարեհուսությունը ձգտում էին խախտել մեր ջանքերով Կովկասում հաստատված խաղաղությունը։ Խոռովահույզ հանգամանքներում նրանք ամուր և անսասան մնացին իրենց ջերմեռանդության մեջ, զոհելով իրենց գույքը, միջոցներն ու կյանքը։ Հայ ժողովրդի ցուցաբերած հավատարմությունն ու նրա մատուցած ծառայությունները և կատարած քաջագործությունները մեզ վրա հաճելի պարտականություն են դնում աշխարհի առջև հաստատելու մեր արգարացի երախտագիտությունը և բարեհաճությունը»⁶⁴։ Եզրափակելով իր ասելիքը և դիմելով «Новое время»-ին, թերթն այնուհետև գրում է. «Այդպիսի մեղադրանքները կարող են միայն ամաչեցնել տիրապետող ազգությունը... Լրագիրն իր պահանջողական եռանդի մեջ պարզապես մոռացել է կարևոր մի ճշմարտություն. «Որտեղ խաղաղությունը զորեղ չէ, հորդորանքները միշտ էլ անգոր են (Շիլլեր)»⁶⁵։

Հակահայկական հրապարակումներից զերծ չմնաց նաև «Московские ведомости» թերթը։ 1897թ. համարներից մեկում թերթը տպագրեց «Հայկական ցնորքներ Կովկասում» հոդվածը։ Թերթի կարծիքով «հայկական ցնորքը» «անկախ Հայաստանի» ծրագիրն էր, որը փայփայում է Հայ երիտասարդությունը և թե իբր «այդ երիտասարդությունը կռիվ է մղում Հայ հոգևորականության և հատկապես կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի դեմ այն պատճառով, որ Հայ կաթողիկոսը հակառակ է անկախ Հայաստան ստեղծելու ցնորքներին»⁶⁶։

Նմանատիպ հրապարակումներով «Հանդես եկավ» նաև Կ. Բորոգդինը⁶⁷։ Դրանցից մեկը գետեղված է «Русский вестник» ամսագրի 1891թ. համարներից մեկում և կրում է «Գաղութաբնականներն Անդրկովկասում»

64 Նույն տեղում։

65 Նույն տեղում։

66 Նույն տեղում, N102։

67 Կ. Բորոգդինը (1828–1897) «Российский царственный дом Романовых» ամսագրի գլխավոր խմբագիրն ու հրատարակիչն էր։ 1849թ. սկսած երկար ժամանակ ծառայել է Կովկասում։ Թղթակցել է ռուսական մի շարք ամսագրերի։

սուլմ» վերնադիրը: Հեղինակն ամեն զնով փորձում է իր հայրենակիցներին մղել այն մտքին, որ գրավված տարածքների բնակիչները և ընդհանրապես բոլոր հայերը պետք է անխուսափելիորեն ենթարկվեն ռուսական ոգուն և մեղադրում է ժամանակի ռուս կառավարիչներին, որ «աչքաթող» են արել այդ պահը. « Երեանի խանության հետ միասին մեզ բաժին ընկավ նաև էջմիածինը, հայոց սրբավայրը, որը դարեր շարունակ գտնվել է մուսուլմանական կրնկի տակ... սակայն այս պայմաններում յուրաքանչյուր մեր քայլը, ինչը վերաբերում է հայոց այդ սրբավայրին և ընդհանրապես ողջ հայրենությանը, որոնք ցնծում էին իրենց եկեղեցու վերածնության համար, ամենից առաջ պետք է համաձայնեցվեր ռուսական շահերի հետ... իսկ մենք թույլ տվեցինք մեծ անհետևողականություն»⁶⁸: Հեղինակն այս անդամ արդեն բողոքում է արևմտահայերի և արևելահայերի դադարի համար. մոռանալով, որ գրանում ամենից առաջ շահագրգռված էր ռուսական կառավարությունը: «Այգպիսով, — եզրակացնում է Բորոգզինը, — այսպես ասած, փայփայելով հայ ազգը, մենք կանգ չառանք և գնացինք նրանց համար ձեռնտու ճանապարհով. Թուրքմենչայի ու Ադրիանապոլսի պայմանագրերով մեզ անցած հողերը մենք սկսեցինք բնակեցնել հայերով, որոնց մենք հրավիրեցինք Պարսկաստանից և Թուրքիայից»⁶⁹: Եվ այդ ամենի մեղավորությունը Բորոգզինը բարդում է այն հայերի վրա, որոնք որոշակի դիրք են ունեցել ռուսական արքունիքում (Լազարևներ, Ներսես Աշտարակեցի և մյուսներ): Անդրկովկասը ռուսականացնելու իր ցանկությունները հեղինակը բացահայտում է արդեն հոգվածի վերջում, դրելով, թե «յուրաքանչյուր ռուս մարդու համար, որն ըմբռնում է իր հայրենիքի շահերը, չի կարող պարզ չլինել, որ Կովկասն այն մասն է, որից միանգամից գրկվելը կնշանակի գրկվել երկու ծովերից, իսկ ճամփաբաժանը, որն ընկած է նրանց միջև, Արևելքում մեր ազդեցության գլխավոր հիմքն է, դեպի Միջին Ասիա, Պարսկաստան և Հնդկաստան տանող դարպասը: Առանց այդ ճամփաբաժանին տիրելու, մեղ համար դրանք մշտապես փակ կլինեն և Ռուսաստանը նորից ստիպված կլինի վերադառնալ Ելիզավետայի թագավորության սահմանները»⁷⁰:

Ռուսական կայսերապաշտական քաղաքականության ըմբռնման մեջ Բորոգզինը գրեթե անթերի է. «Ձգարձնել Կովկասը մեր տերության օրդանական և միասնական մասը և չպահել նրան հրաբխային վիճակում (ընդգծումը — Հ.Հ.) նշանակում է ոչ միայն չբուժել, այլ արհեստականորեն թունավորել մեր վաղուց արդեն ծորացող վերքը»⁷¹: Հայերի նկատմամբ հեղինակի ունեցած անհանդուրժողական վերաբերմունքն ավելի քան ընդդիմված է: Վերջաբանում արտահայտված իր կարծիքներից մեկում Բորոգզինը դրում է. «Հայ վաճառականության բացահայտ ու անողոք հարստացման շնորհիվ հայերի ձեռքն է անցել Անդրկովկասի ողջ առևտուրը... Ահա թե ինչի է հասցնում ռուս մարդկանց երկրամասում տեղավորելու անհարմարության մասին դոկտրինյորությունը»⁷²: Ընթերցելով

68 «Русский вестник», 1891, с. 127.

69 Նույն տեղում, էջ 128:

70 Նույն տեղում, էջ 158:

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում, էջ 159:

Բորոգգիներն, ակամայից հիշում ես «Русское обозрение» ամսագրի 1892 թվականի Համարներից մեկում Ե.Մարկովի «Թուրքմենիայում» հոդվածը, որում հեղինակը նախանձախնդրությամբ է բերում տեղի Հայերի օրինակը. «Ո՛ր էր թե ոուս վաճառականները Հայերի ձիրքն ունենային... նրանք այստեղ նույնիսկ շունչ չեն կարող քաշել Հայերի կողքին»⁷³:

Ի պատիվ «Русский вестник» ամսագրի խմբագիրների՝ տողատակում արված է հետևյալ գրառումը. «Դառնալով այս փաստերին, ինչպես նաև նմանատիպ այլ տեղեկություններին, ամփոփում է ամսագիրը, որոնք հաստատում են երկրամասի ոչ թե ոուսականացումը, այլ Հայկականացումը՝ հատկապես Երևանի, Ելիզավետպոլի և Թիֆլիսի նահանգներում, մենք բավականին հեռու ենք Հայերի նկատմամբ որևէ կանխակալ զգացումից հենց թեկուզ այն բանի համար, որ նրանք խելացի ձևով են վարում իրենց գործերը և նրանց շրջանում կան բավականին թվով Հայրենասերներ՝ ի դեմս Լազարյանների և Ներսեսների...»⁷⁴: Հեղինակից առավել խելացի և իմաստնալից վերջակետը հրապարակման վերջում գնում են իրենք՝ խմբագիրները. «Ժամանակը չէ՛, արդյոք, ինքներս մտածենք Հայկական շահերը ոուսականի հետ ձուլելու և միացնելու մասին»⁷⁵: Իսկ հարցն այսօր էլ նույն հնչեղությունն ու շեշտադրությունն ունի, չնայած մեկգարյա իր հեռավորությունը...

АРМЯНСКИЙ ВОПРОС В РУССКОЙ ПЕЧАТИ (Последняя четверть XIX века)

АЙКАЗ ОГАНЕСЯН

Резюме

Среди многочисленных материалов русской печати последней четверти XIX века немало публикаций посвящено Армянскому вопросу и проблемам западных армян. В этих публикациях представлена также реальная картина резни и погромов западных армян в Турции. Однако в русской периодике встречаются также публикации, в которых эти события даны в искаженном виде.

⁷³ «Русское обозрение», 1897, N 5, с. 61.

⁷⁴ «Русский вестник», 1891, с. 128.

⁷⁵ Նույն տեղում:

THE ARMENIAN QUESTION IN THE RUSSIAN PRESS
(The last quarter of the 19th century)

HAYKAZ HOVHANNISYAN

S u m m a r y

There are quite a lot of publications about the Armenian question and the problems of the Western Armenians among many materials of the Russian press of the last quarter of the 19th c. The real picture of the massacres and pogroms of the Western Armenians in Turkey is also presented in those publications. But there are also some publications in the Russian press that misrepresent those events.